ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 57

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով , <<Համայնքների վարչական տարածներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Թելման Նավոյանի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի դիմումը.

Որոշում եմ.

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Իսահակյան 3 փողոց տուն 9 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Թելման Աջամի Նավոյանի / ծնվ. 18.05.1953թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.11 հա հողամասի, և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շինության նկատմամբ՝ բնակելի տուն՝ 95.80 քմ ՝ կառուցված 1981 թ.,Ծ/Մ՝ 27.10 քմ՝ կառուցված 1981թ., անասնաշենք՝29.40քմ ՝ կառուցված 1981թ.:

Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:

Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում , կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Թելման Աջամի Նավոյանի ՝ ծնվ. 18.05.1953թ.սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի , հողամասում առկա բնակելի տան . օժանդակ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել Իսահակյան 3 փողոց, տուն 9 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 58

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի ն2-րդ կետով, << Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գայ համայնքում 2019 թվականի հոկտեմբերի 17-ին կայացած հողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

Որոշում եմ.

1. Հաստատել ՝ Արմավիրի մարզի Գայ համայնքում 2019 թվականի հոկտեմբերի 17-ին կայացած , Գայ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.5134 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքներով կազմված արձանագրությունը:

2.Աճուրդում հաղթող ճանաչված Անդրուշ Զավենի Սարգսյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 59

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքի վարձակալության իրավունքով տրամադրման 2019 թվականի հոկտեմբերի 17-ի մրցույթի արդյունքները.

Որոշում եմ.

1.Հաստատել 'Արմավիրի մարզի Գայ համայնքում 2019 թվականի հոկտեմբերի 17-ին կայացած ' Գայ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.17 հա 3-րդ կարգի վարելահողի վարձակալության իրավունքով տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ:

2.Մրցույթում հաղթող ճանաչված Մանվել Թովմասի Դիլանյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 60

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 66-Ն որոշումը և Չարքազ Ավդոյանի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.

Որոշում եմ.

1.Չարքազ Ռաշիդի Ավդոյանին թույլատրել Գայ համայնքի Խաչատրյան փողոց, թիվ 6/3 հասցեում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում, իրականացնելու կիսակառույցի քանդման աշխատանքներ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ **Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 61

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով.

Որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ՝աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանի /1.2-1/և աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Արփիկ Ինջիղուլյանի/3.2-1/ատեստավորումն անցկացնել 2019 թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 14:00-ին:

2.Ատեստավորման նախապատրաստման աշխատանքներն իրականացնել <<Համայնքային ծառայության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և ժամկետով:

3.Ատեստավորման տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Գայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Անահիտ Տերտերյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 62

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և հաշվի առնելով որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում , բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին և հիմք ընդունելով քաղաքացի Ռոմիկ Գարուշի Գևորգյանի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը.

Որոշում եմ

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի 19 փողոց թիվ 24 հասցեում գտնվող, քաղաքացի Ռոմիկ Գարուշի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող օրինական 0.12 հա տնամերձ հողամասի և կից ավել զբաղեցրած 240քմ հողամասի նկատմամբ գույքային իրավունքները:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանումում:

3.Սույն որորշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 21

ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 163-րդ հոդվածներով

Կարգադրում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավար Սեյրան Մարկոսյանին տրամադրել 2019 թվականի ամենամյա արձակուրդի 12 աշխատանքային օրը՝ 2019 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 18-ը ներառյալ:

2.Սեյրան Մարկոսյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 19-ից:

3.Սեյրան Մարկոսյանի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես վերապահել Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**